

ՀՏԴ 342. 7

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ԱՐՓԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա*

Եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացման գործընթացում իր գործառության շահերն առանձնահատկություններով պայմանավորված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն աստիճանաբար ամրապնդում է իր տեղն ու դերը: Վերոգրյալի հաշվառմամբ սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրությունն առավելապես ուղղված է Եվրոպական դատարանի՝ որպես միջազգային սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի բնութագրիչ հատկանիշների վերհանմանը:

**Բանալի բառեր.** Եվրոպական դատարան, սահմանադրականացման գործընթաց, միջազգային սահմանադրական արդարադատություն:

Եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացման հայեցակարգը վերջին տարիներին սկսել է առավել մեծ հետաքրքրություն առաջացնել տեսաբանների շրջանում: Եվրոպական միության անդամ պետությունների նախաձեռնությամբ 2004 թ. Եվրոպական սահմանադրության մասին միջազգային պայմանագրի (այլ կերպ՝ Եվրոպական սահմանադրության) ընդունման անհաջող փորձից հետո գիտագործնական քննարկումներն այս առնչությամբ ընթանում էին երկու տարբեր տեսակետներով: Առաջինի կողմնակիցները գտնում էին, որ անհրաժեշտ է ներդացնել և որոշակիորեն սահմանափակել վերպետական միջազգային կազմակերպության հավակնությունները, իսկ տեսաբանների մյուս մասը կողմ էր համընդհանուր սահմանադրական կարգի հաստատմանը՝ հարցին առավել շրջահայաց մոտենալու պայմանով: Վերջիններիս միակ մտահոգությունն այն էր, որ կիրարկվող համակարգը գործնականում լիներ արդյունավետորեն կիրառելի:

Քանի որ հետագայում ԵՄ անդամ պետություններին միասնական սահմանադրական կարգի հաստատման հարցում չհաջողվեց հասնել համաձայնության, Եվրոպական միության շրջանակներում եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացման հայեցակարգի

նկատմամբ հետաքրքրությունն սկսեց աստիճանաբար նվազել: Պատճառը մեկն էր՝ համընդհանուր սահմանադրական կարգի հաստատման համար անհրաժեշտ էր նոր ստեղծվող համակարգի հիմքում ունենալ ոչ թե եվրոպական իրավունքը, այլ սահմանադրական օրինականության առավել համապարփակ ու համընդհանուր աղբյուր: Այս փաստի գիտակցումը բեկում մտցրեց եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացման հայեցակարգի մեջ: Համընդհանուր սահմանադրական կարգի ձևավորման գործընթացում սկսեց նշանակալի դեր խաղալ Եվրոպայի խորհուրդը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Համաձայնագիր) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ Եվրոպական դատարան կամ Դատարան) շնորհիվ:

Հատկապես Համաձայնագրին կից հմ. 11 արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպական դատարանի՝ որպես եվրոպական հասարակական կարգը վերահսկող մարմնի դերն առավել ամրապնդվեց մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության իրավասությամբ օժտված մարմինների շարքում: Համար 11 արձանագրությամբ Եվրոպական դատարանը գործնականում հաստատվեց որպես արդյունավետորեն գործող միջազգային արդարադատության համակարգ, որը երաշխավորում է մարդու հիմնարար իրավունքները և ապահովում այդ իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը: Այսպիսով, համընդհանուր սահմանադրական կարգի հաստատման և եվրոպական իրավունքի սահմանադրականացման գործընթացի առանցքում սկսում է դիտարկվել Եվրոպական դատարանը:

Նախքան Եվրոպական դատարանի՝ որպես միջազգային սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի գործունեության ուսումնասիրությունը, հարկ է վեր հանել «սահմանադրականություն» եզրույթի էությունն առավել հստակ պատկերացնելու համար Եվրոպական դատարանի դերը եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացման գործում: Իրավագետներից շատերը կարծում են, որ «սահմանադրականություն» եզրույթը բազմաշերտ ու բազմանիստ է, և այն որևէ կոնկրետ հատկանիշով բնութագրելն անհնարին է: Միաժամանակ, մասնագետ-տեսաբաններին պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

- ովքեր սահմանադրականություն երևույթը կապում են բուն սահմանադրության գոյության փաստի հետ և դրա միջոցով իրականացվող իրավակարգավորման հետ,
- ովքեր սահմանադրականությունը դիտարկում են արժեքանական տեսանկյունից՝ որպես հասարակական համակեցության որոշակի մշակույթի դրսևորում [1, էջեր 10-11]:

Սույն աշխատության շրջանակներում «սահմանադրականություն» հասկացությունն օգտագործվում է վերը նշված երկրորդ իմաստով: Այլ

կերպ ասած՝ Եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացումը ոչ թե հանգում է որոշակի տարածաշրջանում ընդհանուր կիրառություն ու մեկնաբանություն ունեցող իրավական ակտի ճանաչմանն ու կիրառմանը, այլ այն սոցիալական համակարգի ձևավորմանը, որում իրականացվում է Եվրոպական իրավական համակարգի արժեքանությունը:

Եթե Եվրոպական դատարանի ձևավորման ու գործունեության սաղմնային փուլում Համաձայնագիրը ստորագրող պետությունների մեծ մասը մերժում էր Եվրոպական դատարանի պարտադիր իրավասությունը սահմանելու առաջարկները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ներպետական իրավական համակարգում մարդու իրավունքների պաշտպանության գործուն կառուցակարգերը բացակայում էին կամ գործում էին ոչ բավարար արդյունավետությամբ և նման մեխանիզմի ձևավորման փորձը միջազգային մասշտաբով չէր կարող միանգամից արդյունավետորեն իրագործելի լինել, ապա ընդամենը մի քանի տարի անց պետություններն իրենք գնահատեցին Եվրոպական դատարանի անհրաժեշտությունը և արդյունավետությունը, ինչի վառ ապացույցն է Համաձայնագրին կից հմ. 11 արձանագրությամբ դատարանի իրավասության շրջանակի և գործիքակազմի լրացուցիչ հստակեցումը: Մասնավորապես, Արևմտյան Եվրոպայի պետությունները հաջողությամբ ընդունեցին «նոր սահմանադրականության» գաղափարախոսությունը, որի հիմքում ընկած էր իրավունքների պաշտպանությունը [2, էջեր 219-221]:

Եվրոպական դատարանը թե՛ իր գործառույթների բովանդակությամբ և թե՛ վճիռների անուղղակի ազդեցությամբ սկսում է աստիճանաբար ամրապնդել իր դերը միջազգային սահմանադրական արդարադատության համատեքստում: Ի հիմնավորումն այս տեսակետի՝ ուսումնասիրության շրջանակներում վեր են հանվել սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների բնութագրական հատկանիշները և դիտարկվել Եվրոպական դատարանի բնութագրիչների հետ առկա ընդհանրությունների տեսանկյունից:

Տեսաբաններն առանձնացնում են երեք պայմաններ, որոնց միաժամանակյա առկայության պարագայում է միայն սահմանադրական դատարաններին հաջողվում լայն ազդեցություն տարածել իրենց իրավասության ներքո իրավական և քաղաքական միջավայրի նկատմամբ: Դրանք են՝

- օրենքը հեղինակավոր կերպով մեկնաբանելու իրավասություն,
- կայուն ծանրաբեռնվածություն,
- նախադեպաստեղծ գործունեություն [3, էջ 11]:

Եվրոպական դատարանի պարագայում ևս այս երեք գործոններն անհրաժեշտ են ազգային իրավական համակարգերում Համաձայնագրի արդյունավետ ներդնման և ամրապնդման համար հետևյալ հիմնավորումներով:

Համաձայնագրին կից հմ. 11 արձանագրության համաձայն՝ Եվրոպական դատարանն օժտված է համաձայնագրային համակարգի բարեփոխման և համաձայնագրային դրույթների գերակայության ապահովման համար անհրաժեշտ բոլոր լիազորություններով: Եվրոպական դատարանն օժտված է համաձայնագրային իրավունքների բովանդակությունը մեկնաբանելու բացառիկ լիազորությամբ՝ միաժամանակ վերահսկելով ազգային իրավական համակարգերում Համաձայնագրի կիրառումը:

Մարդու իրավունքների եվրոպական իրավունքի հետազոտողներից Դաննի Նիքոլը նշում է, որ հիմնադիր պետություններին նախնական շրջանում չէր հաջողվում կարգավորել իրենց տարաձայնությունները համաձայնագրային իրավունքների բովանդակության և շրջանակի վերաբերյալ [4, էջ 72]: Չկար միասնական մոտեցում նաև այն հարցի շուրջ, թե արդյոք Համաձայնագիրն արտահայտում է հիմնական իրավունքների ընդհանուր շրջանակը, որը կաշկանդում է պետություններին կոնկրետ իրավունքի բովանդակությունը վեր հանելիս, թե Համաձայնագիրը նախատեսում է մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նվազագույն շրջանակը և հանդիսանում է այն հիմքը, որի հիման վրա իրավունքների բովանդակությունն առավել ընդլայնվում և զարգանում է: Թեև հիմնադիր պետությունները միանշանակ կողմ չէին այս տարաձայնությունները կարգավորող և Համաձայնագրային դրույթները մեկնաբանող դատական ատյանի ձևավորմանը, այնուամենայնիվ հստակ էր նման ատյանի ձևավորման անհրաժեշտությունը: Այսօր արդեն գրեթե անհնարին է պատկերացնել Համաձայնագիրն առանց Եվրոպական դատարանի, ու սա միայն այն պատճառով, որ պետությունները ժամանակի ընթացքում աստիճանաբար եկել են այն ընդհանուր գիտակցությանը, որ անհրաժեշտ է ամրապնդել իրենց վստահությունը Եվրոպական դատարանի՝ որպես համաձայնագրային համակարգի կայունության երաշխավորի նկատմամբ: Սրանով պետությունները որոշակի լիազորություններ են փոխանցել Եվրոպական դատարանին՝ «լրացնելու» կամ «ձևակերպելու» Համաձայնագրային իրավունքները միասնական գաղափարախոսության շրջանակներում, ժամանակի ընթացքում այն դարձնելով առավել որոշակի ու հասանելի բոլոր անդամ պետությունների համար՝ անտեսելով պետությունների իրավական համակարգերի միջև առկա տարբերությունները:

Եվրոպական դատարանի կայուն ծանրաբեռնվածության մասին է վկայում վերջինիս կողմից վարվող պաշտոնական վիճակագրությունը, համաձայն որի՝ յուրաքանչյուր տարվա ընթացքում շուրջ 50000 գանգատ հանձնվում է դատարանի քննությանը [5]: Ինչպես հաճախ նշում են մարդու իրավունքների միջազգային իրավունքի մասնագետները՝ Եվրոպական դատարանը դարձել է ինքն իր հաջողության զոհը և Եվրոպական

դատարանի զարգացման հեռանկարներում գործերի նման ծանրաբեռնվածությունը պակասեցնող մեխանիզմների մշակումն ու ներդնումը դառնում է արդյունավետ գործունեության ապահովման հրամայականը [6]:

Եվ վերջում, Եվրոպական դատարանն իր գործառույթների արդյունավետ իրականացումը լավագույնս ապահովում է նախադիպային իրավունքի ձևավորման ու զարգացման միջոցով: Նախադեպերի միջոցով Եվրոպական դատարանը փորձում է իրավակիրառ պրակտիկայում պարտադիրության ուժ հաղորդել համաձայնագրային դրույթների վերաբերյալ իր իրավական մեկնաբանություններին՝ նպաստելով «իրավական որոշակիության հաստատմանը և նախադիպային իրավունքի կանոնավոր զարգացմանը» [7, էջ 97]: Դատարանը ճանաչում և ուղղորդվում է իր նախադեպերով և կարող է շեղվել դրանցից միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է շտկել իր կողմից ավելի վաղ թույլ տրված սխալը կամ անհրաժեշտություն է առաջացել ապահովել Համաձայնագրի մեկնաբանության փոփոխումը և համապատասխանեցումը հասարակության փոփոխություններին և ներկայիս պայմաններին [8]: Հարկ է ընդգծել, որ “*Tyrer v. The United Kingdom*” գործով վճռում Եվրոպական դատարանն առաջին անգամ ձևակերպեց Համաձայնագրի՝ որպես «ապրող փաստաթղթի» գաղափարախոսությունը, որը հետագայում տարածեց ողջ նախադիպային իրավունքի ընկալման նկատմամբ [9]: Հենց այս գաղափարախոսության որդեգրման շնորհիվ է Եվրոպական դատարանին հաջողվել ժամանակի ընթացքում համապատասխանեցնել Համաձայնագրի տեքստը իրավական, սոցիալական, էթնիկական կամ գիտական զարգացումներին:

Այսպիսով, Եվրոպական դատարանն օժտված է բոլոր գործառույթներով և ունի բավականաչափ անհրաժեշտ գործիքակազմ համաձայնագրային համակարգի բարաշրջման զարգացման գործում իր գերակշիռ դերն ու ազդեցությունն ունենալու, ինչպես նաև Եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացումն ապահովելու համար:

Համար 11 արձանագրության ուժի մեջ մտնելուց և մշտական հիմունքներով գործող դատարանի ձևավորումից հետո Եվրոպական դատարանին ներկայացվող գանգատներով բարձրացվում են անդամ պետություններում մարդու իրավունքների տարաբնույթ խախտումները, որոնց քննության և իրավական գնահատականներ տալու համար Եվրոպական դատարանն ուսումնասիրում և վերլուծում է ներպետական իրավական կարգավորումները՝ հաճախ բացահայտելով նաև առկա հակասությունները: Դատարանը որոշում է, թե ինչպես է իրավական ակտերի կիրառման այս կամ այն պրակտիկան ազդում անձի իրավունքների իրականացման հնարավորության վրա և խախտում է արդյոք մարդու համաձայնագրային իրավունքները, թե ոչ: Դատարանը, ըստ անհրաժեշտության, պետություններին ուղղորդող բնույթի ցուցումներ է տալիս, թե ինչպես պետք է փոփո-

խել օրենսդրությունը կամ իրավասու մարմինների գործելակերպը, որպեսզի համաձայնագրային իրավունքներն առավելագույնս երաշխավորվեն: Պետությունները սովորաբար արձագանքում են Դատարանի այս ուղղորդումներին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց և կատարման փուլ փոխանցվելուց հետո՝ կատարելով համապատասխան փոփոխություններ [10]: Փոփոխելով օրենսդրությունը կամ պրակտիկան, դրանք համապատասխանեցնելով Համաձայնագրի պահանջներին՝ պետությունները բոլոր անձանց հնարավորություն են ընձեռում օգտվել մարդու իրավունքների պաշտպանության համակարգի հետագա զարգացումից: Արդյունքում, դատական մեկ ակտն այդպես կարող է ազդեցություն ունենալ տվյալ երկրի ողջ բնակչության վրա:

Եվրոպական դատարանի կողմից հրապարակված վճիռների հիման վրա կատարված օրենսդրական փոփոխությունների օրինակներ են արհմիությանն անդամակցելու պարտավորության վերացումը Դանիայում, Ֆրանսիայում ժառանգման իրավունքի հավասար հնարավորության ճանաչումն օրինական ամուսնության շրջանակում և օրինական ամուսնությունից դուրս ծնված երեխաների միջև, Միացյալ Թագավարությունում ֆիզիկական պատժի արգելքը պետական դպրոցներում, հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման օրենսդրական կարգավորումը Շվեյցարիայում, մի շարք պետություններում վարույթների չափից դուրս երկար տևողության և ողջամիտ ժամկետի խախտման համար իրավական պաշտպանության միջոցների ամրագրումը [11, էջ 3]:

Այնուամենայնիվ, ի տարբերություն սահմանադրական դատարանների մեծամասնության, Եվրոպական դատարանն իրավասու չէ անվավեր ճանաչել անձի իրավունքների խախտմանը հանգեցրած և Համաձայնագրով երաշխավորվող իրավունքների բովանդակության ու էության հետ անհամատեղելի իրավական նորմերը կամ նորմերի կիրառման որոշակի պրակտիկան:

Դատարանի նման լիազորության բացակայությունը տեսաբանների մեծ մասը հիմք է ընդունում մերժելու համար դատարանի՝ որպես միջազգային սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի կարգավիճակը [12, էջեր 53-54]: Այս տեսակետի կողմնակիցները, մասնավորապես, պնդում են, որ դատարանը չի կարող երբևէ օժտվել ներպետական իրավական ակտերն անվավեր ճանաչելու լիազորությամբ, քանի որ դա հակասում է դատարանի գործունեության հիմքում ընկած սուբսիդիարության սկզբունքին: Ավելին, Համաձայնագրի իմպլեմենտացումը ներպետական իրավական համակարգում արդեն իսկ բավական է պետության կողմից սեփական իրավական համակարգում իրավական ակտերի ներդաշնակեցումը և համապատասխանեցումն ապահովելու հա-

մար՝ անհրաժեշտության դեպքում անվավեր ճանաչելով Համաձայնագրին և Եվրոպական դատարանի նախադիպային իրավունքին հակասող իրավական դրույթները:

Մեր համոզմամբ ոչ մի *a priori* պատճառ չկա մերժելու համար միջազգային դատարանի «սահմանադրական» կարգավիճակը միայն այն պատճառով, որ վերջինս չունի անդամ պետության սահմանադրական կարգի նկատմամբ ուղղակի ներգործության ու արդյունավետ ազդեցության կառուցակարգ: Ասվածը հիմնավորելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

- արդյոք Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետություններում Համաձայնագրին իմպլեմենտացվում է նույն ձևով ու ծավալով,

- արդյոք համաձայնագրային կառուցակարգի արդյունավետությունն ապահովվում է միայն անձի իրավունքը խախտող իրավական դրույթի մատնանշմամբ, թե ոչ, և եթե ոչ, ապա այդ խախտման վերացմանն ուղղված միջամտությունը հանգեցնում է սուբսիդիարության սկզբունքի խախտման,

- արդյոք Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը գնահատելիս պետք է հաշվի առնել նաև յուրաքանչյուր դեպքում պետության սահմանադրական կարգի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի ներգործելու հնարավորությունը:

Համեմատելով ներպետական իրավունքի նկատմամբ Համաձայնագրի դրույթների և Եվրոպական դատարանի նախադիպային իրավունքի ազդեցության վերաբերյալ սահմանադրական դրույթները՝ կարող ենք վեր հանել Եվրոպական դատարանի վճիռների տեղն ու դերը ներպետական իրավական համակարգում: Այսպես, ելնելով ներպետական իրավունքի համակարգում Համաձայնագրի կիրարկման աստիճանից՝ պետությունները կարելի է դասակարգել հետևյալ երեք խմբում.

- պետություններ, որոնցում Համաձայնագրին իմպլեմենտացված է սահմանադրական մակարդակում,

- պետություններ, որոնցում Համաձայնագրին իմպլեմենտացված է օրենսդրական մակարդակում,

- պետություններ, որոնցում Համաձայնագրին վերագրվում է որևէ միջանկյալ՝ այսպես կոչված վերօրենսդրական կամ քվադի-սահմանադրական կարգավիճակ:

Քննարկենք այս երեք խումբ պետություններից յուրաքանչյուրից մի քանի օրինակներ: Ալբանիայի իրավական համակարգում, ի համեմատություն պետության կողմից վավերացված այլ միջազգային պայմանագրերի, Համաձայնագրի գերակա դերի վերաբերյալ առկա է հատուկ մոտեցում: Մասնավորապես, Ալբանիայի սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների սահմանափակումները չպետք է խաթարեն այդ իրավունքների և ազատությունների բուն էությունը և ոչ մի պարագայում չեն

կարող գերազանցել Համաձայնագրով նախատեսվող սահմանափակումների չափը և ծավալը: Փաստացի, Ալբանիայի սահմանադրությամբ հիմնական իրավունքների սահմանափակումների նախատեսման առնչությամբ Համաձայնագիրը և սահմանադրությունը դիտարկվում են որպես հավասար իրավական ուժ ունեցող փաստաթղթեր:

Վերը նշված դասակարգման համատեքստում երկրորդ խումբ պետությունների շարքին են դասվում Գերմանիան և Իտալիան: Այս պետությունների իրավական համակարգերում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերը՝ այդ թվում և Համաձայնագիրը, ունեն օրենքին հավասար իրավական ուժ, ինչը բխում է սահմանադրական դատարանների որոշումներից: Հատկանշական է, որ ֆորմալ առումով Համաձայնագրի տեղն ու դերը ներպետական իրավունքի համակարգում բնութագրող սահմանադրական դրույթները հաճախ մասնավորեցվում և հստակեցվում են սահմանադրական դատարանների որոշումներում: Օրինակ՝ Գերմանիայի սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում նշվում է, որ Գերմանիայի իրավական համակարգում Համաձայնագիրը պետք է դիտարկել որպես դաշնային օրենքներին հավասարազոր իրավական ուժ ունեցող իրավական ակտ: Սահմանադրական դատարանի համոզմամբ ներպետական դատարանները պետք է Համաձայնագրային դրույթները դիտարկեն որպես ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մաս և կիրառեն այն նույն կերպ, ինչպես դաշնային օրենքները մեկ տարբերությամբ միայն, որ Համաձայնագրային դրույթները պետք է ընկալվեն որպես մարդու իրավունքների էությունը բացահայտող ուղենիշային մեթոդաբանական մեկնաբանություններ: Համաձայնագրային դրույթները և Եվրոպական դատարանի նախադիպային իրավունքը մեկնաբանողական նշանակություն ունեն Գերմանիայի սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների բովանդակության բացահայտման և վերջիններիս պաշտպանության հանրային-իրավական կառուցակարգերի վերհանման համար:

Նույն կերպ Խորվաթիայի սահմանադրական դատարանի որոշումներում է բացահայտվում Համաձայնագրի քվադի-սահմանադրական կարգավիճակը: Խորվաթիայի սահմանադրական դատարանը մարդու իրավունքների վերաբերյալ պետության կողմից վավերացված բոլոր միջազգային պայմանագրերի, ներառյալ Համաձայնագրի համար իրավական ակտերի աստիճանակարգության մեջ նախատեսում է հատուկ կարգավիճակ: Խորվաթիայի սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 24-ի հմ. Ս-1/1583/2010 որոշմամբ մասնավորապես նշվել է, որ թեև Համաձայնագիրը չունի նույն իրավական ուժն ինչ սահմանադրությունը, և օրենսդրության աստիճանակարգության մեջ բոլոր միջազգային պայմանագրերն իրավական ուժով ստորադասվում են սահմանադրությանը, այնուամենայնիվ մարդու ի-



րավունքների և հիմնական ազատությունների երաշխավորման տեսանկյունից Համաձայնագրի դերը հավասարեցվում է սահմանադրությանը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ինչպես սահմանադրական, այնպես էլ Համաձայնագրի դրույթներն ուղղորդիչ նշանակություն են ունենում ներպետական օրենքների իրավականությունը գնահատելիս:

Իրավական համակարգում Համաձայնագրի տեղի ու դերի վերաբերյալ առավել համակարգային ու ամբողջական եզրահանգումներ կատարելու համար թերևս անհրաժեշտ է հարցը դիտարկել ոչ միայն ստատիկ՝ այն է, թե ինչ է նախատեսվում կոնկրետ պետության սահմանադրությամբ, այլ նաև դինամիկ տեսնակյունից՝ գործնականում ինչպես են կիրառվում համաձայնագրային դրույթները և ինչ ազդեցություն են ունենում իրավական համակարգի ձևավորման և զարգացման վրա: Անվիճարկելի դատողություն է, որ պետության կողմից համաձայնագրային համակարգի հնարավորին համապարփակ և ամբողջական ներդնումը գործնականում վկայում է ներպետական իրավունքում համաձայնագրային դրույթների և նախադիպային իրավունքի առավել արդյունավետ կիրարկման մասին: Եվ հակառակը, եթե Համաձայնագիրն ազգային օրենսդրության մեջ ներառելու գործուն կառուցակարգեր առկա չեն, ապա Եվրոպական դատարանի կարողությունը՝ անուղակիորեն ազդելու պետության օրենսդրության և պրակտիկայի զարգացման ընթացքի վրա խիստ նվազում է՝ ի համեմատություն ազգային սահմանադրական դատարանների: Այնուամենայնիվ, անկախ այդ տարբերություններից, ներպետական իրավական համակարգում Համաձայնագրի ներդնման միջոցով Համաձայնագիրն սկսում է գործել որպես «սովերային սահմանադրություն»:

Անդրադառնալով մեր կողմից առաջադրված երկրորդ հարցին՝ այն է՝ արդյոք Համաձայնագրային կառուցակարգի արդյունավետությունն ապահովվում է միայն անձի իրավունքը խախտող իրավական դրույթի մատնանշմամբ, թե ոչ, և եթե ոչ, ապա այդ խախտման վերացմանը միջամտությունը հանգեցնում է արդյոք սուբսիդիարության սկզբունքի խախտման, հարկ է կրկին ուսումնասրել միջազգային փորձը: Բոլոր այն պետություններում, որտեղ գործում են սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմիններ, Եվրոպական դատարանը հանդես է գալիս, որպես իրավունքների ազգային պաշտպանության միջոցները լրացնող միջոց: Ավելին, որոշ պետություններում, ինչպես օրինակ՝ Գերմանիայում, Իռլանդիայում, Իսպանիայում, Իտալիայում Եվրոպական դատարանի վճիռներով արձանագրված խախտումներն անմիջապես փոխանցվում են սահմանադրական դատարաններին, որպեսզի վերջիններս վերհանեն վճռով արձանագրված խախտման աղբյուրները, դիտարկեն դրանք ներպետական իրավական կարգավորումների լույսի ներքո և որպես խախտման առաջացման պատճառ օրենսդրական թերի կամ Համաձայնագրին անհամապատասխան կարգավորումները որակելու

պարագայում անվավեր ճանաչեն խնդրո առարկա իրավադրույթը: Ավելին, Չեխիայում, Հունգարիայում, Լեհաստանում և Սլովակիայում սահմանադրական դատարաններն իրենց որոշումների պատշաճ պատճառաբանության համար հաճախ վկայակոչում են Համաձայնագիրը և Եվրոպական դատարանի նախադիպային իրավունքը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ իրավունքների պաշտպանության համաձայնագրային կառուցակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է ոչ միայն մարդու իրավունքների խախտումների արձանագրումը և պաշտպանության բավարար երաշխիքների նախատեսումը, այլ նաև կանխարգելիչ գործառույթը՝ ներպտական իրավունքի զարգացումը Եվրոպական դատարանի նախադիպային իրավունքին համահունչ: Ինչ վերաբերում է սուբսիդիարության սկզբունքի ենթադրյալ խախտմանը, հարկ է նշել հետևյալը. 2010 թվականին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված Ինտերլակենի հռչակագրով սահմանված սուբսիդիարության սկզբունքն առավելապես վերաբերում է անհատական գանգատների հիման վրա գործերը քննելիս Եվրոպական դատարանի դատազրույթանը [13]: Մասնավորապես, ինչպես դատարանը նշել է իր նախադիպային որոշումներից շատերում, մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կառուցակարգի առանձնահատկությունը մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառուցակարգերի նկատմամբ վերջիններիս սուբսիդիարությունն է: Այս սկզբունքի իմաստով նախապատվությունը տրվում է իրավունքների պաշտպանության ներպտական կառուցակարգի գործունեությանը, իսկ մարդու խախտված իրավունքների վերականգնման հարցի քննությունը Եվրոպական դատարանի իրավասությանը հանձնելը պետք է համարվի իրավունքի պաշտպանության վերջին միջոց [14]: Այսինքն, սուբսիդիարության սկզբունքն առավելապես վերաբերում է իրավունքի խախտման ճանաչմանն ու արձանագրմանը և չի սահմանափակում Եվրոպական դատարանին իրավունքի խախտումն արձանագրող իրավադրույթների մատնանշումից հետո գնահատական տալ դրույթի Համաձայնագրին հակասող ճանաչելու վերաբերյալ:

Նախքան Եվրոպական դատարանի՝ որպես միջազգային սահմանադրական դատարանի վճիռների ազդեցության գնահատման սահմանների պարզաբանումը հարկ է վեր հանել առհասարակ սահմանադրական դատարանների վճիռների ազդեցության գնահատման չափանիշները, ինչը հիմք կհանդիսանա համեմատության մեջ դիտարկելու համար երկու առյանների դատական ակտերը: Սահմանադրական արդարադատության միջազգային փորձի և սահմանադրական համակարգերի զարգացման միտումների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ սկսած XX դարասկզբից՝ ձևավորվել են օբյեկտիվ նախադրյալներ սահմանադրական արդարադատության որակապես նոր համակարգի անցում կատարելու

համար: Դրանք առաջին հերթին վերաբերում են հասարակական հարաբերությունների որակական ակտիվ վերափոխումներին, ինչի լույսի ներքո օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության ապահովման խնդիրը դադարել է սահմանադրական դատարանի համար միայն կամ առավելապես մարդու իրավունքների պաշտպանության խնդիր լինելուց [15, էջ 44]: Հետևապես, եթե որոշ դեպքերում միջազգային դատական ատյանների, ինչպես օրինակ Եվրոպական դատարանի դեպքում, դատարանի գործունեության ազդեցության և արդյունավետության գնահատման ցուցիչ կարող է հանդիսանալ վերջինիս կողմից քննության առնված գործերի կամ մուտքագրված դիմումների թիվը, ապա սահմանադրական դատարանների գործունեության ազդեցության գնահատման հիմնական չափանիշը հասարակական գործընթացների վրա նրանց իրավական ազդեցությունն է, որն ուղղված է սահմանադրական հավասարակշռության պահպանմանն ու հասարակության կայուն և դինամիկ առաջընթացին: Համանմանությամբ, Եվրոպական դատարանի դեպքում ևս վերջինիս գործունեության ազդեցության գնահատատման հիմնական չափանիշը ներպետական իրավունքի համակարգի զարգացման վրա համաձայնագրային համակարգի ներգործությունն է: Հետաբար, խախտում արձանագրող վճռի հրապարակման հետ մեկտեղ խախտման համար հիմք հանդիսացած իրավադրույթը Համաձայնագրին հակասող ճանաչելով՝ Եվրոպական դատարանն անուղղակի ազեցություն կարող է ունենալ տվյալ պետության սահմանադրական կարգի և օրենսդրության կատարելագործման վրա: Ասվածն առավել կարևորվում է հատկապես այն պետությունների դեպքում, որոնք Եվրոպական դատարանի վճիռների կատարման առնչությամբ չեն դրսևորում պատշաճ հետևողականություն, որի արդյունքում նմանատիպ խախտումները կրում են շարունակական բնույթ:

Այսպիսով, ինչպես սահմանադրությունն առանց սահմանադրական դատարանի *lex imperfecta* ակտ է և միայն սահմանադրական դատարանի շնորհիվ է դառնում *lex perfecta*, [16, էջ 12] այնպես էլ Համաձայնագիրը Եվրոպական դատարանի ու Դատարանի մեկնաբանությունների շնորհիվ է դառնում *lex perfecta*: Մեր համոզմամբ, Եվրոպական դատարանը՝ որպես մարդու իրավունքների համաձայնագրային համակարգի պաշտպանության միջոց իր գործառույթներով և, որ ամենակարևորն է, ներպետական իրավական համակարգում Եվրոպական չափանիշների ներդրումն ապահովելու բացառիկ հնարավորությամբ գործում է որպես միջազգային սահմանադրական դատարան: Ժամանակին զուգընթաց, պետությունների կողմից Եվրոպական դատարանի նկատմամբ վստահության ամրապնդման պայմաններում դատարանը միջազգային դատական ատյանից վերածվել է միջազգային սահմանադրական արդարադատության անդրազգային համակարգի՝ ուղղորդող նշանակություն ունենալով ներպետական իրավական համակարգերի զարգացման և իրավակիրառ պրակտիկայի բարեփոխման համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Գ.Գ. Հարությունյան, Ա. Մանասյան**, «Սահմանադրական վերահսկողություն» ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, Իրավունք հրատ., 2015:
2. **Alec Stone Sweet**, “Constitutionalism, Rights, and Judicial Power,” in D. Caramani, ed., Comparative Politics (Oxford: Oxford University Press), 2016.
3. **Alec Stone Sweet and Helen Keller**, “The Reception of the European Convention on Human Rights in European Legal Orders.”, A Europe of Rights: The Impact of the European Convention on Human Rights on National Legal Systems (Oxford: Oxford University Press), 2014.
4. **Danny Nichol**, “Original Intent and the European Convention on Human Rights,” Public Law, 2005.
5. [https://www.echr.coe.int/sites/search\\_eng/pages/search.aspx#\(2sort%22:%22createdAsDate%20Descending%22\],%22Title%22:%22%22analysis%20of%20statistics%22%22\],%22contentlanguage%22:%22ENG%22\]](https://www.echr.coe.int/sites/search_eng/pages/search.aspx#(2sort%22:%22createdAsDate%20Descending%22],%22Title%22:%22%22analysis%20of%20statistics%22%22],%22contentlanguage%22:%22ENG%22]), վերջին մուտքը՝ 04. 05. 2021.
6. <https://www.justiceinitiative.org/voices/160000-cases-and-counting-time-reform-european-court>, վերջին մուտքը՝ 04.05.2021.
7. **Diane Shelton**, “The Boundaries of Human Rights Jurisdiction in Europe,” 13 Duke Journal of Comparative and International Law (2003).
8. ECtHR case of *Cossey v. United Kingdom* (application no. 10843/84), para. 35.
9. ECtHR case of *Tyrer v. the United Kingdom* (application no. 5856/72), para 31.
10. Նախարարների կոմիտեի 02.05.2013թ. թիվ GT-REF.ECHR(2013)2-rev2 հանձնարարականը:
11. «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա. ապրող փաստաթուղթ», Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Եվրոպայի խորհուրդ, 2020թ. Սեպտեմբեր:
12. **Alec Stone Sweet**, Paper on the Constitutionalisation of the Convention published in “A Europe of Rights” (OUP, 2008).
13. High level conference on the future of the European court of human rights, Interlaken Declaration, 19 february 2010.
14. ECtHR case of *Belgian Linguistics v. Belgium*, (application nos 1474/62, 1677/62, 1692/62, 1769/63, 1994/63, 2126/64), para. 10.
15. **Գ. Հարությունյան**, «Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» Երևան, 2005:
16. **Тропег М.**, “Проблема толкования и теория верховенства Конституции”//Сравнительное конституционное обозрение, N. 53, Москва, 2005.

---

## ЕВРОПЕЙСКИЙ СУД ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО КОНСТИТУЦИОННОГО ПРАВОСУДИЯ

АРПИНЕ АРАКЕЛЯН

---

*Академия государственного управления Республики Армения*

---

В процессе конституционализации европейской правовой системы, благодаря своим функциональным особенностям, Европейский суд по правам человека постепенно укрепляет своё место и роль. Учитывая вышеизложенное, в рамках данной статьи, исследование преимущественно направлено к выявлению характеризующих качеств Европейского суда, как органа, осуществляющего международное конституционное правосудие.

**Ключевые слова.** Европейский Суд, конституционный процесс, международная конституционная юстиция.

## EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS IN THE CONTEXT OF INTERNATIONAL CONSTITUTIONAL JUSTICE

ARPINE ARAKELYAN

---

*Public Administration Academy of the Republic of Armenia*

---

Due to its functional features, the European Court of Human Rights is gradually strengthening its place and role in the process of constitutionalization of the European legal system. Taking into account the above, the study in the framework of this article is mainly aimed at revealing the characteristics of the European Court as an international constitutional justice body.

**Keywords:** European Court, Constitutional Court, International Constitutional Court.

*Ներկայացվել է խմբագրություն 30.03.2021  
Երաշխավորվել է փաթագրության 22.05.2021*